Արդյո՞ք չենք մոռացել ԵՀՔ գործողությունների ծրագրի մասին

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

«Կառավարության ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության և Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի դրույթները, և ներառում է Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի հանրապետական կուսակցության և Բարգավաճ Հայաստան կուսակցության նախընտրական ծրագրերի հիմնական, ինչպես նաև Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության նախընտրական ծրագրի առանձին դրույթներ»:

ՀՀ կառավարության ծրագիր
21 հունիսի, 2007թ.

ԵՀՔ գործողությունների ծրագիր

Յոթ ամիս առաջ Հայաստանն ստորագրեց *Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիրը*: Այն նախատեսում է նպատակային վերափոխումների ճանապարհով հնգամյա ժամկետում հասնել մի իրականության, երբ Հայաստանը շատ ավելի մոտ կլինի բառի ոչ աշխարհագրական տեսանկյունից եվրոպական երկիր կոչվելու հեռանկարին: Գործողությունների ծրագիրը համապարփակ մի փաստաթուղթ է, որ անդրադառնում է ՀՀ հանրային կյանքի ընդգրկուն համապատկերի: Այն հայեցակարգային բնույթ ունի և արձանագրում է ընդհանուր նպատակադրումներ ու հանձնարարականներ: Փաստաթուղթը հրապարակված է, հասանելի: Ենթադրվում է, որ այդ նպատակներին հինգ տարվա ընթացքում հասնելու համար երկիրը մշակում է ոլորտային ծրագրեր, կոնկրետ գործողությունների պլան և առաջ է շարժվում դրանցով:

ՀՀ կառավարության ծրագիր

ԵՀՔ գործողությունների ծրագրի ստորագրումից յոթ ամիս անց ընդունվեց ՀՀ կառավարության ծրագիրը, որը սահմանում է ՀՀ կառավարության գործունեության նպատակադրումները առաջիկա հինգ տարիների համար: Կառավարության ծրագիրը համապարփակ այն փաստաթուղթն է, որ ներառում է կառավարության գործունեության ընդգրկուն դաշտը պարունակող ոլորտային և ենթաոլորտային նպատակադրումներն ու դրանց իրականացմանը հասնելու քայլերը: Փաստորեն, հենց կառավարության ծրագիրն է, որ ուղենշում է, թե երկրի կողմից արդեն իսկ ընդունված հայեցակարգերն ու միջազգային հարաբերություններում ստանձնած պարտավորություններն ինչպես և ինչ ուղղությամբ են իրականանալու: Որպես այդպիսին, այս կառավարության ծրագիրն իր նախաբանում հռչակում է, որ ներառում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի դրույթները:

Համադրումների համագումարում

Եվ այսպես, 4,4 տարի հետո ավարտվում է ԵՀՔ ԳԾ-ն, 5 տարի հետո՝ կառավարության ծրագրի իրականացումը: Պարզ տրամաբանությունը հուշում է, որ կառավարության ծրագիրը ամբողջությամբ ներառում է գործողությունների ծրագիրը կամ առնվազն ամբողջությամբ այն մասով, որ կառավարության իրավասությունների շրջանակում է: *Ներառու՞մ է արդյոք:*

Մի բան պարզ է. ՀՀ կառավարության ծրագիրը ոչ միայն չի հռչակում, որ պարունակում է ԵՀՔ գործողությունների ծրագրով նախատեսված դրույթները, այլև չի պարունակում «Եվրո-

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

պական հարևանության քաղաքականություն» կամ դրա գործողությունների ծրագիր բառակապացություններն ընդհանրապես:

Ոմանք կպնդեն, թե դա բնական է, քանզի կառավարության ծրագրում չեն մանրամասնվում ՀՀ արտաքին քաղաքականության նպատակադրումները՝ հաշվի առնելով ՀՀ նախագահի ինստիտուտի հետ դրանց ամրակցման սահմանադրական դրույթը: Փորձագետները կվստահեցնեն, թե այդօրինակ պնդումն ավելի շատ պակաս իրազեկվածության արդյունք է: ԵՀՔ ԳԾ-ն լոկ արտաքին քաղաքականության ոլորտում չէ այլևս. այն փաստաթուղթ է ՀՀ հանրային կյանքի բոլոր ոլորտների վերաբերյալ, մասնավորապես՝ ընդգրկելով ՀՀ կառավարության ծրագրով բաղդատված ոլորտների ողջ աստիճանակարգությունը:

Ստացվում է, որ, մի կողմից, ՀՀ կառավարության ծրագիրն է այն պետական փաստաթուղթը, որով պիտի իրականանա ԵՀՔ ԳԾ հիմնադրույթների գերակշիռ մասը, մյուս կողմից՝ ծրագրում ոչինչ նշված չէ այդ մասին: Մնում է հուսալ, որ սա իրականում ոչինչ չի նշանակում, որ ԵՀՔ ԳԾ իրականացման համար անհրաժեշտ ոլորտային ծրագրերը լայն թափով մշակվում են, դրանք հընթացս համահունչ են դարձվում կառավարության ծրագրի իրականացման համար մշակվող ծրագրերին, և կարևորագույն այս գործընթացը գտնվում է պատշաճ ինստիտուցիոնալ կոորդինացման հարթության վրա:

Ամեն դեպքում հարցերի պատասխանը ժամանակը կտա: Շատ կարճ ժամանակը:

Համառոտագիրը մշակվել է 2007թ-ի հուլիսի 6-ին կայացած՝ “ԵՀՔ ԳԾ ստորագրումից 7 ամիս անց. ի՞նչ ունենք” վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ: